

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Ուր. 21 Դեկտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Ս. Սեւան եպս. Ղարիպեան:

Շր. 22 Դեկտ.- Յզուբին Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Ս. Սեւան եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Ս. Սեւան եպս. Ղարիպեան:

Կիր. 23 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Ս. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան:

Ուր. 28 Դեկտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 29 Դեկտ.- Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Ս. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 30 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Ս. Արիս եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Ս. Կոմիտաս Վրդ. Շէրպէճեան:

Ուր. 4 Յուն.- Պատրիարք Սրբազանը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատեսակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս. Աթոռոյ «Օրհնեցէ՛ք զՏէր» շարականի երգեցողութեամբ թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

Շր. 5 Յուն.- Ս. Դաւթի Մարգարէին եւ Յակովբայ Տեառնեղբօր (Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի):

Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջառ եւ եմփփորոն զգեցած բարձրացաւ, Տեառնեղբօր Աթոռի պատուանդանին ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտը, եւ ընդունեց Միաբանութեան եւ դպիրներուն շնորհաւորութիւնները:

Օրուան Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Ս. Նուրհան Արք. Մանուկեան:

Պատարագին աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

Կիր. 6 Յնվր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Ս. Աւետիս Արք. Իփրանեան:

- Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատեսակին:

Բուրվառակիր Հայրերն էին Ս. Նորայր Արք. Գազազեան եւ Ս. Իսահակ Արք. Մինասեան:

Բշ. 7 Յնվր.- Արքայն Ստեփանոսի նախասարկաւագին եւ առաջին Մարտիրոսին:

Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս. Աթոռոյս քարեշնորհ սարկաւագները եւ ուրարակիրները, առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներուն, մարգարտագարդ սաղաւարտներով, տապանակ եւ բուրվառ ի ձեռնին, կատարեցին «Սարկաւագաց Հանդէսը»: Արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Ս. Դեռնդ Արք. Յովհաննիսեան:

- Գիշերասկիզբին ժառանգաւորաց նաշարահին մէջ տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք՝ Սարկաւագաց Տօնին առթիւ: Խօսք առին դպրոցին Տեսուչը՝ Ս. Պարէտ Մ. Վրդ. Երէցեան, սարկաւագներէն Յովնան Արք. Բաղդասարեան, բուրվառակիր Ս. Իսահակ Արք. Մինասեան, ուսուցիչներէն Պրմ. Սուրէն Արքահամեան:

Պատրիարք Սրբազան Հայրը ըրաւ իր փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ «Պահպանիչ»ով:

- Գլխաւոր Առաքելոց նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Ս. Սեւան եպս. Ղարիպեան:

Գշ. 8 Յնվր.- Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատոյց Ս. Թէոդորոս Արք. Զաֆրեան:

Դշ. 9 Յնվր.- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Մայր Տաճար, ուր Որդւոց Որոտման տօնի հանդիսաւոր նախատեսակին նախագահելէ ետք, Ս. Աթոռոյ «Որ էմն յէութեան» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

Եշ. 10 Յնվր.- Տօն Արքայն Որդւոցն Որոտման: Մայր Տաճարի Ս. Գլխաղրի մատրան մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը: Առընթերակից վարդապետներն էին Ս. Բագրատ Արք. Պուրնէֆեան եւ Ս. Աւետիս Արք.

Իփրանեան, բուրվառակիր վարդապետներն էին Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան եւ Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Պատրիարք Սրբազան Հայրը, ամպիովանիի տակ խաչափայտի մասունք ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանդէս բափօրին տանարէն ներս:

Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը բափօրով Ս. Աթոռոյ «Որ էնն յէութեան» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Պատրիարք Սրբազան Հայրը օրհնուած ճշխարհ րաժնեց բոլորին, փակելով շարքը Աւագ տօներուն:

Շր. 12 Յնվր.- Արքայն Բարազի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Կիր. 13 Յնվր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Նուրհան Արք. Մանուկեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Իրիկնադէմին Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ եղան ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցած «Կազանդ»ի հանդէսին:

Բշ. 14 Յնվր.- Կազանգ, Նոր Տարի - քստ Հին Տոմարի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ Բարոգեց «Ժամօրհնող» Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Յետոյ բոլորը բարձրացան Պատրիարքարան երգելով Ս. Աթոռոյ մաղթերգը: Ս. Թ. Վարժարանի սաները գողտրիկ ուղերձ մը արտասանեցին եւ երգեցին: Նորին Ամենաառուորիւնը քրաւ իր պատշաճ խօսքը եւ ներկաներուն քաժնեց նարինջ:

Ուր. 18 Յնվր.- Ժրագայոյց Ա. Մենդեան: Առաւօտուն ժամը 9ին Ընդհանուր Ոստիկանապետը, եւ Հին Քաղաքի պատասխանատու ոստիկաններ, Պատրիարք Սրբազանին այցելեցին Ս. Մնունդը շնորհաւորելու եւ դէպի Բեթղեհէմ բափօրին հսկողութեան համար:

Ժամը 10ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինճնաշարժերու շարանով մը ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ: Ծամբու կիսուն Յունաց Ս. Նղիա վանին առջեւ դիմաւորելու եկած էին Պէյք-Սահուրի եւ Պէյք-Ճալալի ֆաղաֆապետները, Բեթղեհէմի փոխ ֆաղաֆապետը եւ պետական ներկայացուցիչներ:

Իսրայէլեան հինգ ոստիկան ձիաւորները նկերացան Պատրիարք Սրբազանի ինճնաշարժին, առջեւն եւ իովերէն, մինչեւ

Խաֆէլի գերեզմանը, որմէ ետք բափօրը Պաղեստինեան հինգ ձիաւորներով առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ: Քաղաքի մուտին, ինճնաշարժներն դուրս ելլելով, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութեան անդամները ֆալելով յառաջացան դէպի հրապարակ:

Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորելով Բեթղեհէմի Կառավարիչէն, նախագահ Եսարը Արաֆաթի ներկայացուցիչներէն, Ընդհանուր Ոստիկանապետէն, Քաղաքապետէն եւ պաշտօնեաներէն, նաեւ Հ.Ե.Միութեան եւ Հ.Մ.Ը.Միութեան սկաուտական խումբներէն, որոնց միացած էին, Բեթղեհէմի ընդհանուր սկաուտապետ Օտէ Պիշարայի ներկայութեամբ, Օրթոտոֆ սկաուտական խումբը Բեթղեհէմի, Սուրբ Յովսէփի Արեւուշական խումբը Բեթղեհէմի, Թէրասանքայի սկաուտական խումբը Բեթղեհէմի, Պէյք Սահուրի Հովուաց եւ Յոյն Օրթոտոֆ խումբը: «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ բափօրը բարձրացաւ Մենդեան Տաճարի Հայկական Վանքը: Յետ միջօրէի ժամը 2ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»ով մուտք կատարուեցաւ Ս. Մենդեան Տաճար եւ Ս. Այր: Ժրագայոյցի Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուցեց Տ. Թեոդորոս Արդ. Զաֆարեան: Ապա՝ Միաբանութիւնը բարձրացաւ Հայոց Վանք: Բակին մէջ կարդացուեցաւ Ս. Մենդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի Բարձուն»:

Շր. 19 Յնվր.- Տօն Մենդեան եւ Աստուածայայտութեան: Կէս գիշերէն առաջ ժամը 10ին, գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը կ'իջնէ Ս. Մենդեան այր ուր կը շարունակուի «Փառք ի Բարձունսի» երգեցողութիւնը: Պաղեստինեան Կառավարութեան ներկայացուցիչներ ներկայ եղան, եւ աւարտին Պատրիարք Սրբազան Հօր Մենդեան Հայերէն եւ Անգլերէն պատգամներէն յետոյ, բափօրով վեր բարձրանալով, հիւրերը մեկնեցան, շնորհաւորելով Պատրիարք Սրբազան Հայրը:

Պաշտամունքները շարունակուեցան Տաճարին մէջ: Պատրիարք Սրբազան Հայրը եւ Լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեան վերադարձան Երուսաղէմ: Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Բագրատ Արդ. Պուրնէնեան: «Ջրօրհնէի» արարողութեան հանդիսապետը Տ. Արիս Եպս. Երիվանեան:

Ս. Մենդեան այրին մէջ պատարագեց Տ. Արիս Եպս. Երիվանեան: Պաշտամունքները աւարտեցան առաւօտեան ժամը 6ին, Միաբանութիւնը բափօրով բարձրացաւ Հայոց

վանք, եւ քակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարանը եւ երգուեցաւ «Փառք ի Բարձուն»։ Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ։

Երուսաղէմի մէջ Ճրագալոյցի արարողութիւնը կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ։ Ս. Գերեզմանի վրայ պատարագեց Ս. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան։ Նախատօնակին հանդիսապետն էր Տաճարին Տեսուչը՝ Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան։ Արարողութիւնները կ'աւարտին Տաճարին տեսչարանին մէջ։

Առաւօտեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, պատարագեց Ս. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան եւ հանդիսապետեց «Ջրօրհնէքի» արարողութեան։

Կիր. 20 Յնվր.- Յիշատակ Մեռելոց։ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարգման Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան։ Հոգեհանգստեան կարգին նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը։

Ուր. 25 Յնվր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը։

Շր. 26 Յնվր.- Տօն Անուանակոչութեան Տեառն։ Առաւօտուն, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Գրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց Ս. Սեւան Եպս. Ղարիպեան։ «Հայր Մեր»-ն առաջ փարօգեց Լուսարարապետ Ս. Նուրհան Արք. Մանուկեան։

Դէպի վանք դարձին Հայոց Թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի Լուսոյ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը։ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց «Տնօրհնէք»ի արարողութեան, որ կրկնուեցաւ վարդապետաց սեղանատան մէջ։ Պատրիարք Սրբազան Դահլիճը բարձրացած ժողովուրդին նարինջ բաժնեց։

Կիր. 27 Յնվր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան։ Ժամարարը եւ փարօգիչն էր Ս. Էմմանուէլ Արք. Աթաջանեան։ Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Ս. Արիս Եպս. Շիրվանեան։

Բշ. 28 Յնվր.- Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ։ Ժամարարն էր Ս. Ընծանուէր Արք. Բարախանեան։

Շր. 2 Փետր.- Արքեպ. Թեոդոսի բազաւորին եւ եօթն Մանկանցն եփեսոսի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Ս. Իսահակ Արք. Մինասեան։

Կիր. 3 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Ս. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան։

Շր. 9 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Ս. Գուսան Վրդ. Այնանեան։

Կիր. 10 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Հանդիսապետն էր Ս. Սեւան Եպս. Ղարիպեան։ Ժամարարն էր Ս. Աւետիս Արք. Իփրանեան։

Շր. 16 Փետրուար.- Արքեպ. Որդւոց եւ Թոռանց Արքեպ. Գրիգորի Լուսաւորչին մերձը՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի եւ Դանիէլի։

Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Ս. Թեոդորոս Արք. Զաֆարեան։

Կիր. 17 Փետրուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ Խորանին վրայ։ Ժամարարն էր Ս. Նորայր Արք. Գազաբեան։

Ուր. 22 Փետրուար.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Լուսարարապետ Ս. Նուրհան Արք. Մանուկեանը։

Շր. 23 Փետրուար.- Թաղէմսի Առաքելայն եւ Սանգիտայ Կուսին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան։

Կիր. 24 Փետրուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ժամարարը եւ փարօգիչն էր Ս. Էմմանուէլ Արք. Աթաջանեան։

Շր. 26 Փետրուար.- Տեառներդառաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան» եւ մոմավառութիւն, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր։

Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեղեց»ի հսկման կարգը։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Ս. Նուրհան Արք. Մանուկեան։

Դշ. 27 Փետրուար.- Տեառներդառաջ։ Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Լուսարարապետ Ս. Նուրհան Արք. Մանուկեան։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Կիր. 23 Դեկտ.- Իսրայելի մէջ Դաշնային Ռուսաստանի լիազօր դեսպան Միխայէլ Պոգոբանովի «Բարի երբ» ի առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեանի:

Դշ. 26-29 Դեկտ.- Կաթոլիկ եւ Բողոքական եկեղեցիներու Ս. Մննդեան տօնին առիթով, Երուսաղէմի մէջ սկսուեցան սովորութեամբ հաստատուած շնորհաւորանքները:

Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորութեան գնաց Յրանչիսկեան Կիւսթոսին, Լատինաց Ամեն. Պատրիարքին եւ Անկլիկան Եպիսկոպոսին: Այնուհետեւ շնորհաւորանքները շարունակուեցան գլխաւորութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Բանի մը Միաբան Հայրերու՝ այցելելով Մարոնիք Համայնքի Պտրք. Փոխանորդին, Լատիերականներուն եւ Յայն Կաթոլիկ Եպիսկոպոսին:

Եշ. 27 Դեկտ.- Իսրայելի մախագահ Մօշէ Քացաւի կողմէ, ի պատիւ Քրիստոնեայ Համայնքներու կրօնապետներուն, մախագահական ապարանքին մէջ կազմակերպուած Նոր Տարուան հիւրասիրութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի:

Կիր. 30 Դեկտ.- Գեղեցիկ սովորութեան մը համաձայն, կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Համար-ձում Վրդ. Քէշիշեանի եւ Տ. Իսահակ Արդ. Միմասեանի այցելեց Զիքեմեաց Լերան մօտ Ազարիայի մէջ հաստատուած «Վիշտերուն Մեր Օր» Տարեցներու Տօնը: Վերջինիս մէջ հաւասարապէս կը խմամուին ամէն ազգի եւ կրօնի պատկանող տարեցներ, եւ հայ տարեցներ եւս:

Պատրիարք Սրբազան Հօր այցելութիւնը գոհունակութիւն առաջացուց այդ Տան քնակիչներուն մէջ երգերով եւ միփարական խօսքերով: Մայրապետները բաժանեցին Պատրիարքարանի կողմէ բերուած պոստիկ «Կաղանդէ՛՛ք»-երը, եւ Պատրիարք Սրբազան Հայրը մէկ առ մէկ մօտեմալով եւ քաջառողջութիւն մաղթելով՝ օրհնեց թէ՛ քնակիչները եւ թէ՛ ծառայող մայրապետները:

Շր. 5 Յունուար 2002.- Դաւիթ Մարգարէի եւ Յակոբայ Տեառնեղբայր Առաքելոյն տօնին առիթով, Պատրիարք Սրբազան Հօր հրաւերով, Պատրիարքարանիս մեծ դահլիճին

մէջ կազմակերպուած հիւրասիրութիւն-ընթրիքին իրենց մասնակցութիւնը բերին Իսրայէլեան եւ Պաղեստինեան պետական անձեր, հիւպատոսներ եւ ներկայացուցիչներ, Երուսաղէմի եկեղեցիներու կրօնապետներ ու կրօնական ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հայկական կազմարպութիւններու վարչութեան ատենապետներ: «Բարեգալտեան» ուղերձով Պատրիարք Սրբազան Հայրը ողջունեց ներկայները, որմէ ետք տեղի ունեցաւ Պատրիարքարանի զինանշանը կրող Կարկանդակի արարողութիւնը: Այսպիսով հաստատուեցաւ օտարները հիւրասիրելու մի նոր ամաղութիւն:

Կիր. 13 Յունուար.- Ըստ Հին Տօմարի, Ամանորի մախընթաց երեկոյին ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահէն ներս տեղի ունեցաւ Ամանորի եւ Ս. Մննդեան հանդէս, ժառանգաւոր սաներու մասնակցութեամբ: Տեսուչ Տ. Պարտ Մ. Վրդ. Երէցեանի քացման խօսքով սկսաւ յայտագիրը, որու երաժշտական համարներուն իրենց մասնակցութիւնն էին բերած Վարժարանի Սովեթիոյն ուսուցիչներ Տիար Վահէ Գալայեան, Տէր եւ Տիկին Վալերի Փիրուսեաններ: Յիշատակելի էր նոր ժառանգաւոր սաներէն ումանց դաշնակի կատարումները: Ուղերձի եւ արտասանութեան, դաշնակի եւ խմբական երգերու կողքին, յայտագրին մաս կը կազմէր նաեւ 'Ha Serenata' (Francesco Paulo Tosti) մեներգը, կատարողութեամբ Տ. Գուսան Վրդ. Ալեանեանի եւ դաշնակի մուգակցութեամբ Պրմ. Դաւիթ Պօղոսեանի: Պատրիարք Սրբազան Հայրը փակման խօսքին մէջ քաջալերեց մատաղ սերունդին Աստուծոյ կողմէ ստացած շնորհներու ցուցաբերումը թէ՛ միաբանական եւ թէ՛ առօրեայ կեանքին մէջ եւ իր օրհնութիւնը տուաւ բոլորին: Հանդէսը վերջացաւ Տէրունական աղօթքի երգեցողութեամբ:

Ուշ երեկոյեան, Նոր Տարուան առիթով Հոգեւորական Հայրեր Պատրիարք Սրբազան Հօր հետ ընթրիք եւ խրախմամբ ունեցան Պատրիարքարանի մէջ:

Կէսգիշերային զանգակահարութեան աւանդութիւնը տեղի ունեցաւ Վանքի Մեծ Բակին մէջ, ուր հաւաքուած քաղմութիւն կար: Ժառանգաւորաց սաներուն կողմէ Մննդեան շարականներու երգեցողութեամբ աւետուեցաւ Աւանդական Նոր Տարուայ մուտքը: Տակաւին կը հնչէին Մայր Տաճարի մեծ զանգերը, երբ «Փառք ի բարձունս» երգի երանգները կը հասնէին մասնակից ժողովուրդին: Տ. Արիս

Եպս. Ծիրվանեան խաղաղութեան պատգամով արձակեց ներկաները, մաղթելով որ Աստուած վերահաստատէ համերաշխութեան եւ հանդուրժողութեան ոգին Ս. Երկիրէն ներս, եւ իր յոյսով զօրացնէ ամօր քնակիչները:

ԵՂ. 17 Յունուար.- Հայոց Ս. Ծննդեան տօնի նախօրեակին, կէսօրէ ետք Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, այցելեցին Պաղեստինեան Կառավարութեան նախագահ Եսսըր Արաֆաթին Ռամալլայի իր ապարանքէն ներս, ուր եղան շնորհաւորական խօսքեր:

ԲՂ. 21-22 Յունուար.- Հայոց Ս. Ծննդեան տօնին առթիւ, շնորհաւորութեան համար Պատրիարքարան այցելեցին Իսրայէլի եւ Պաղեստինի պետական ներկայացուցիչներն ու ռաշիականները, Յունաց Պատրիարքը եւ Քուստոսը իրենց Միաբանութեան անդամներով, Կաթօլիկ, Ուղղափառ եւ Բողոքական Եկեղեցիներու հոգեւորական ներկայացուցիչները:

ԲՂ. 21 Յունուար.- Լատինաց Պատրիարք Միշէլ Սապպահին կողմէ Knight's Palace-ին մէջ նախաճշնոյթ ընթրիքին, ի պատիւ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի Կաթօլիկ Եպիսկոպոսաց Ս. Երկիր կատարած այցին, մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը՝ ընկերակցութեամբ Ս. Արիս Եպս. Ծիրվանեանի եւ Ս. Իսահակ Արք. Մինասեանի:

ԴՂ. 23 Յունուար.- Յունուար 20-27, Աղօթքի Շաբաթ Քրիստոնէական Միութեան: «Ի թէն է, Տէր, աղբիւր կենաց» (Սաղմոս 35:10) խորագիրը կրող յատուկ կրօնական պաշտամունք տեղի ունեցաւ Երուսաղէմի ութը տարբեր յարանուանութեանց եկեղեցիներու մէջ:

Զորեմշաթթի, 23 Յունուարին, կէսօրէ ետք ժամը 5ին, Էփրեմեիկ արարողութիւն տեղի ունեցաւ Ս. Յակոբեանց Մայր տաճարին մէջ: Արտաքին յարաբերութիւններու եւ Էփրեմեիկի գրասենեակի պատասխանատու Ս. Արիս Եպս. Ծիրվանեանի գլխաւորութեամբ:

Միասնական աղօթքին ներկայ էին եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչներ, ուր Ս. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանը փոխանցեց օրուան պատգամը, յորդորելով միմեանց աջակցել եւ միիքարել, ներկայիս դժուարին պայմաններուն տակ: Ժառանգաւոր սաներու «Քրիստոս ի մէջ» ողջոյնի երգեցողութեամբ, քրիստոնեաները անգամ մըն ալ հաղորդ եղան Սիրոյ Ողջոյնին: Իւրաքանչիւրն իր լեզուով աղօթեց «Հայր Մեր»ը, որմէ ետք ժառանգաւորաց փոքր սրահին մէջ մատուցուեցաւ հիւրասիրութիւն:

ԲՂ. 2 Փետրուար.- Կէսօրէ ետք, Augusta Victoria Լուսեռական հիւանդանոցին մէջ, World Vision կազմակերպութեան մօր գրասենեակներու վերահաստատման օրուան հիւրասիրութեան ներկայ գտնուեցան Ս. Արիս Եպս. Ծիրվանեան եւ Ս. Իսահակ Արք. Մինասեան: Հիւրերուն ներկայացուեցան մասնագիտի աշխատանքային գրասենեակները եւ աշխատակազմը:

Եր. 23 Փետրուար.- Առաւօտեան, Երուսաղէմի քրիստոնեայ համայնքներու Կրօնապետները այցելեցին Պաղեստինեան Կառավարութեան նախագահ Եսսըր Արաֆաթին, իրենց Իդ Էլ-Ադիա տօնին առիթով: Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանային Լուսաբարապետ Ս. Նուրիան Արք. Մանուկեան եւ Ս. Արիս Եպս. Ծիրվանեան: